ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/96» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ապրանքների (Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնի համար գույքի) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան **20.12.2024թ**

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Անահիտ Հակոբյան

Արման Երանոսյան

Ցոլակ Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մերի Ասատրյան

1. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին.

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/96» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընտրված մասնակից «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով 05.12.2024թ ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում (մինչև 2024 թվականի դեկտեմբերի 19 ներառյալ) չի ներկայացրել 2-րդ, 5-րդ ,6-րդ և 17-րդ չափաբաժինների մասով՝ ստորագրված պայմանագիրը, որակավորման ու պայմանագրի ապահովումները:

1.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

1.3 Առաջնորդվելով սույն արձանագրության 1.2 կետով և ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետով, գնման ընթացակարգը 2-րդ, 5-րդ ,6-րդ և 17-րդ չափաբաժինների մասով՝ հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա, պայմանագիր չկնքելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

1.4 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

_____ Հրանտ Մկրտչյան /նախագահ/

_____ Անահիտ Հակոբյան

_____ Արման Երանոսյան

_____ Ցոլակ Հակոբյան

_____ Մերի Ասատրյան /քարտուղար/